ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«21» 12 2020թ. թիվ 175-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՆՇՈՒՄՈՎ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 99-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 397-Ն որոշմամբ սահմանված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի գործունեության ընթացքում առաջացող փաստաթղթերի պահպանության ժամկետների նշումով ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի

դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների պետերին՝ ապահովել.

1) Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի գործունեության ընթացքում առաջացող փաստաթղթերի պահպանությունը սույն հրամանով հաստատված հավելվածով սահմանված ժամկետներում.

2) սույն հրամանով հաստատված հավելվածով չնախատեսված փաստաթղթերի պահպանումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի թիվ 397-Ն որոշմամբ սահմանված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկի պահանջներին համապատասխան:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին:

4. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի գործունեության ընթացքում առաջացող փաստաթղթերի պահպանության ժամկետների նշումով ցանկը հաստատելու մասին» թիվ 99-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչել:

5. Սույն հրամանը չի տարածվում մինչև սույն հրամանի ուժի մեջ մտնելը արդեն իսկ տեղային փորձագիտական հանձնաժողովների կողմից փորձաքննությամբ արժեքավորված փաստաթղթերի ոչնչացման գործընթացի նկատմամբ:

6. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, մարմինների և ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի արխիվի պետին:

Հ. Գրիգորյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
21 12 2020թ.
թիվ 145 Լ հրամանի

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՆՇՈՒՄՈՎ

h/h	Փաստաթղթի անվանումը	Փաստաթղթի պահպանության ժամկետը		Ծանոթություն
		ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնում և ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի կառուցվածքային ստորաբաժանումներում	ՀՀ քննչական կոմիտեի մարմիններում, ստորաբաժանումներում և ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումներում	
1	2	3	4	5
	1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ			
1.	ՀՀ քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալների և ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտեր. 1) ներքին իրավական ակտեր. ա. բնօրինակները, բ. պատճենները. 2) անհատական իրավական ակտեր (բացառությամբ անձնակազմին վերաբերող հրամանների). ա. բնօրինակները, բ. պատճենները	 մշտ. մ.ա.կ. 5 տ[1]. մ.ա.կ.	 - մ.ա.կ. - մ.ա.կ.	[1]անհրաժեշտությունը կորցնելուց հետո

2.	Այլ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից ընդունված իրավական ակտեր (պատճենները՝ ստացված ի գիտություն). 1) ՀՀ քննչական կոմիտեի հիմնական գործունեության վերաբերյալ, 2) այլ բնույթի	մշտ. մ.ա.կ.	մ.ա.կ. մ.ա.կ.	
3.	Իրավական ակտերի և միջազգային պայմանագրերի նախագծեր, դրանց վերաբերյալ կարծիքներ, առաջարկություններ, եզրակացություններ և այլ գրագրություն. 1) այլ մարմիններից ստացված, 2)ՀՀ քննչական կոմիտեի կողմից մշակված օրենքների, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի որոշումների, 3) ՀՀ քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալների, ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարի իրավական ակտերի	5 տ. 5 տ. 5 տ[1].	5 տ. 5 տ. 5 տ[1].	[1] շրջանառությունից հանվածները՝ մեկ տարի
4.	Փաստաթղթեր (տեղեկանքներ, զեկուցագրեր, հաղորդումներ և այլ գրագրություն)՝ ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների պետերի հանձնարարությունների կատարման վերաբերյալ	5 տ.	5 տ.	
5.	ՀՀ քննչական կոմիտեի կոլեգիայի նիստերի արձանագրություններ և որոշումներ՝ կից փաստաթղթերով. 1) բնօրինակները, 2) պատճենները (ստացված ի գիտություն)	մշտ. մ.ա.կ.	- մ.ա.կ.	
6.	Խորհրդակցությունների արձանագրությունները՝ կից փաստաթղթերով. 1) ՀՀ քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալների մոտ կայացած, 2) ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների, ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների պետերի մոտ կայացած, 3) ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարի մոտ կայացած	մշտ. 5 տ. 5 տ.	մ.ա.կ. մ.ա.կ. մ.ա.կ.	
7.	ՀՀ քննչական կոմիտեում և ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում ստեղծված մշտական գործող հանձնաժողովների նիստերի արձանագրություններ, որոշումներ	մշտ.	-	
8.	Գրագրություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետ.			

	1) ՀՀ քննչական կոմիտեի հիմնական գործունեության վերաբերյալ, 2) ընթացիկ գործունեության վերաբերյալ	մշտ. 5 տ.	- -	
9.	Գրագրություն ՀՀ դեսպանությունների, հյուպատոսությունների, միջազգային կազմակերպությունների և միջազգային ոչ կառավարական այլ կազմակերպությունների հետ	5 տ.	5 տ.	
10.	Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ երկրների իրավապահ մարմինների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ փաստաբանների պալատի և այլ կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրեր, համաձայնագրեր, հուշագրեր և այլ փաստաթղթեր՝ կից նյութերով	մշտ.	-	
11.	Փաստաթղթեր (ծրագրեր, ելույթների տեքստեր, արձանագրություններ և այլ գրագրություն)՝ գիտաժողովների, կոնֆերանսների, խորհրդակցությունների վերաբերյալ 1) ՀՀ քննչական կոմիտեի հիմնական գործունեության վերաբերյալ, 2) այլ բնույթի	մշտ. 5 տ.	- 5 տ.	
12.	ՀՀ քննչական կոմիտեի մարմիններում և ստորաբաժանումներում, ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում կատարված ստուգումների մասին փաստաթղթեր (զեկուցագրեր, տեղեկանքներ, ակտեր և այլ գրագրություն)	5 տ.	5 տ.	
13.	Դատական գործերով փաստաթղթեր, վարույթներ. 1) քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ. ա. գույքային իրավահարաբերություններ, բ. անձնական ոչ գույքային իրավահարաբերություններ, գ.գործարքների հետ կապված իրավահարաբերություններ, դ. պարտավորական իրավահարաբերություններ. 2)վարչական իրավահարաբերությունների վերաբերյալ, 3)աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ	մշտ. մշտ. 5 տ. 5 տ. 5 տ. 5 տ.	- - - - - -	
14.	ՀՀ քննչական կոմիտեի մարմինների, ստորաբաժանումների և ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կազմակերպչական բնույթի ներքին գրագրություն (այդ թվում՝ զեկուցագրեր, շրջաբերականներ և տեղեկանքներ)	5 տ.	5 տ.	
15.	ՀՀ քննչական կոմիտեի նախագահի, նրա	5 տ.	5 տ.	

	տեղակալների և ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից վերահսկողության վերցված փաստաթղթերի պատճեններ			
16.	Դիմումներ, բողոքներ, տեղեկատվություն ստանալու հարցումներ և/կամ դրանց վերաբերյալ վարույթներ	5 տ.	5 տ.	
17.	Ազդարարների կողմից ներկայացված հաղորդումների գրանցամատյաններ	5 տ.	-	
18.	ՀՀ քննչական կոմիտեի (դեպարտամենտի) աշխատողների հաճախումների գրանցամատյան	-	3 տ.	
	2. ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ			
19.	Կարճված քրեական գործեր, դրանց թվայնացված նյութեր պարունակող էլեկտրոնային կրիչներ կամ լազերային սկավառակներ, վարույթներ և արխիվացման տեղեկատվական քարտեր[1]. 1) ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ, 2) միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ, 3) ծանր հանցագործությունների վերաբերյալ, 4) առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ, 5) վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ	5 տ. 10 տ. 15 տ. մշտ. 5 տ.	5 տ. 10 տ. 15 տ. մշտ. 5 տ.	[1]կարճման որոշում կայացնելուց հետո
20.	Քրեական գործի հարուցումը մերժված նյութեր[1]. 1) ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ, 2) միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ, 3) ծանր հանցագործությունների վերաբերյալ, 4) առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ	5 տ. 10 տ. 15 տ. մշտ.	5 տ. 10 տ. 15 տ. մշտ.	[1]քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելուց հետո
21.	Դատարան ուղարկված քրեական գործերի թվայնացված նյութեր պարունակող էլեկտրոնային կրիչներ կամ լազերային սկավառակներ, վարույթներ. 1) ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ, 2) միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ, 3) ծանր հանցագործությունների վերաբերյալ, 4) առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ, 5) բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ գործեր	5 տ. 10 տ. 15 տ. մշտ. 10 տ.	3 տ. 5 տ. 10 տ. 15 տ. 10 տ.	

22.	Դատախազության, դատարանների, հետաքննության, նախաքննության այլ մարմինների և ՀՀ քննչական կոմիտեի մարմինների, ստորաբաժանումների միջև գրագրություն	5 տ.	5 տ.	
23.	ՀՀ քննչական կոմիտեի վարույթում գտնվող կասեցված քրեական գործերի ցուցակներ, վարույթը կասեցված քրեական գործերի հանձնման-ընդունման ակտեր	20 տ.	20 տ.	
24.	Իրեղեն ապացույցների, առգրավված, կալանք դրված գույքի և այլ արժեքների հաշվառման մատյաններ	մշտ.[1]	մշտ.[1]	[1] պետական արխիվ չի հանձնվում
25.	Քրեական գործերի հաշվառման մատյաններ	մշտ.[1]	մշտ.[1]	[1] պետական արխիվ չի հանձնվում
26.	Նյութերի հաշվառման մատյաններ	15 տ.	15 տ.	
27.	Զեկուցման ներկայացված քրեական գործերի գրանցման մատյան	5 տ.	5 տ.	
28.	Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումներ	5 տ.	-	
29.	Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններ ուղարկված քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների պատճեններ	մ.ա.կ.	5 տ.	
30.	ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի ծառայողների նկատմամբ անցկացված ծառայողական քննության նյութեր	5 տ.	-	
31.	ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչության կողմից անցկացրած ուսումնասիրությունների նյութեր	5 տ.	-	
32.	Ոստիկանությունից ստացված հաղորդումներ	1 տ.	1 տ.	
	3. ԱՆՁՆԱԿԱԶՄ			
33.	Անձնակազմին վերաբերող հրամաններ. 1) նշանակման, ազատման մասին, 2) դասային աստիճան շնորհելու մասին, 3) կարգապահական տույժերի, խրախուսումների մասին և այլ հրամաններ, 4) գործուղումների մասին, 5) արձակուրդների մասին	 50 տ. 50 տ. 50 տ. 5 տ. 5 տ.	 - - - - - -	
34.	Գործուղումների վերաբերյալ զեկուցագրեր, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր	5 տ.	5 տ.	
35.	Անձնական գործեր	50 տ.	-	
36.	Անձնական գործերի հաշվառման մատյաններ	50 տ.	-	
37.	Ծառայողական վկայականների հաշվառման մատյաններ	15 տ.	-	
38.	Ծառայողների վերապատրաստման վերաբերյալ փաստաթղթեր	5 տ.	մ.ա.կ.	
39.	Որակավորման հանձնաժողովի արձանագրություններ,	5 տ.	-	

	որոշումներ			
40.	Փաստաթղթեր խրախուսանքների և այլ պարգևատրումների վերաբերյալ (մեդալներ, կրծքանշաններ, շքանշաններ, պատվոգրեր, պետական պարգևներ, պատվավոր կոչումներ և այլն)	50 տ.	-	
41.	Գրագրություն աշխատանքային գործունեության վերաբերյալ	5 տ.	-	
42.	Արձակուրդի դիմումներ, արձակուրդների տրամադրման ժամանակացույցեր	2 տ.	2 տ.	
43.	Փաստաթղթեր պրակտիկայի անցկացման մասին	5 տ.	5 տ.	
44.	Քննիչների թեկնածությունների և առաջխաղացման ցուցակներ	մշտ.	-	
45.	ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգումների, ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցույթների կազմակերպման վերաբերյալ հայտարարություններ, արձանագրություններ, որոշումներ և այլ փաստաթղթեր	5 տ.	-	
46.	ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով հայտ ներկայացրած անձանց վերաբերյալ փաստաթղթեր. 1) որակավորման տետրեր	5 տ. մ.ա.կ.	- -	
47.	ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար կամ այլ պաշտոնի, աշխատանքի համար դիմած անձանց վերաբերյալ փաստաթղթեր	5 տ.	-	
48.	ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի գրություններ, վարույթներ և այլ փաստաթղթեր	5 տ.	-	
49.	ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու վերաբերյալ փաստաթղթեր, գրանցամատյաններ	50 տ.	-	
50.	Աշխատանքային պայմանագրի հաշվառման մատյաններ	5 տ.	-	
51.	Խրախուսանքների և կարգապահական տույժերի հաշվառման մատյաններ	50 տ.	-	
52.	Անձնական գործերի արխիվացման մատյաններ	մ.ա.կ.	մ.ա.կ.	
53.	Անձնակազմին վերաբերող հրամանների հաշվառման մատյաններ	50 տ.	-	
54.	ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի ծառայողների գործուղման հաշվառման մատյաններ	5 տ.	5 տ.	

	4. ԾՐԱԳՐՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ			
55.	Աշխատանքի ծրագրեր և հաշվետվություններ (ուսումնասիրություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր՝ դրանց կատարման վերաբերյալ). 1) պատճենները	մշտ. մ.ա.կ.	մ.ա.կ. մ.ա.կ.	
56.	Վիճակագրական հաշվետվություններ՝ գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ. 1) տարեկան, 2) կիսամյակային, եռամսյակային, ամսական, 3) պատճենները	մշտ. 5 տ. մ.ա.կ.	մ.ա.կ. մ.ա.կ. մ.ա.կ.	
57.	Վիճակագրական տվյալների հիման վրա կազմված տեղեկանքներ, զեկուցագրեր և այլ գրագրություն (այդ թվում՝ այլ մարմիններից ստացված, այլ մարմիններ ուղարկված հարցումներ և դրանց պատասխաններ)	5 տ.	-	
58.	Գիտամեթոդական և այլ ձեռնարկներ, գրավոր աշխատանքներ	3 տ.	-	
59.	Տեղեկանքներ, վերլուծություններ, ամփոփումներ, հաղորդումներ հիմնական գործունեության վերաբերյալ. 1) պատճենները	մշտ. 3 տ.	մ.ա.կ. -	
60.	Ոստիկանությունից ստացված վիճակագրական հաշվետվություններ	5 տ.	-	
	5. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ			
61.	Վարչական ապարատի պահպանման ծախսերի նախահաշիվներ	մշտ.	-	
62.	Հաշվապահական հաշվեկշիռներ և ֆինանսական հաշվետվություններ. 1) տարեկան, 2) եռամսյակային, կիսամյակային, 3) պատճենները (ստացված ի գիտություն)	մշտ. մշտ. մ.ա.կ.	- - մ.ա.կ.	
63.	Աշխատավարձի հաշվարկավճարային տեղեկագրեր	5 տ.	-	
64.	Փաստաթղթեր (արձանագրություններ, գույքագրման ցուցակներ, ակտեր, տեղեկագրեր) գույքագրման մասին. 1) անշարժ գույքի, 2)շարժական գույքի և ապրանքանյութական այլ արժեքների	10 տ.[1] 5 տ.	10 տ.[1] 5 տ.	[1]հաջորդ գույքագրումից հետո
65.	Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրեր	5 տ.	5 տ.	
66.	Պայմանագրեր և համաձայնագրեր (տնտեսական, աշխատանքային, նյութական պատասխանատվության, գործառնական)	5 տ.[1]	-	[1] պայմանագրի ժամկետը լրանալուց հետո
67.	Գրագրություն ֆինանսատնտեսական հարցերի մասին	5 տ.	5 տ.	
68.	Փաստաթղթեր (պահանջագրեր, քարտեր, մատյաններ) պահեստային տնտեսության վարման	5 տ.	5 տ.	

	մասին			
69.	Նյութական արժեքների հանձնման-ընդունման ակտեր	5 տ.	-	
70.	Ավտոմեքենաների ուղեգրեր	5 տ.	-	
	6. ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ			
71.	Հատուկ կարևորության, հույժ գաղտնի և գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվության ձևակերպման ենթակա աշխատողների պաշտոնների անվանակարգություն	1 տ.	-	[1]նորը կազմելուց հետո
72.	Առաջին և երկրորդ ձևերի թույլտվությունների քարտերի հաշվառման մատյան	5 տ.	-	
73.	Երրորդ ձևի թույլտվությունների քարտերի հաշվառման մատյան	5 տ.	-	
74.	Թույլտվության մասին տրվող տեղեկանքների հաշվառման մատյան	5 տ.	-	
75.	Գործուղվածների հաշվառման մատյան, պատվիրագրերի գործ	5 տ.	-	
76.	Թույլտվության քարտեր, միջնորդագրեր, պարտավորագրեր. 1) առաջին և երկրորդ ձև, 2) երրորդ ձև	5 տ. 1 տ.	- -	
77.	Մահացած անձանց թույլտվությունների քարտեր[1]	-	-	[1]ենթակա չեն պահպանման և ոչնչացվում են հերթական ակտով
78.	Պետական և ծառայողական գաղտնիքներին փաստացի իրազեկության մասին եզրակացություններ	5 տ.	-	
79.	Մտից փաստաթղթերի հաշվառման մատյան	5 տ.	5 տ.	
80.	Ելից փաստաթղթերի հաշվառման մատյան	5 տ.	5 տ.	
81.	Մտից, մեքենագիր, ելից և ներքին փաստաթղթերի հաշվառման մատյան	5 տ.	5 տ.	
82.	Մեքենագրված փաստաթղթերի հաշվառման մատյան	5 տ.	5 տ.	
83.	Մատյանների և գործավարությամբ ավարտված գործերի հաշվառման մատյան	մշտ.[1]	մշտ.[1]	[1] պետական արխիվ չի հանձնվում
84.	Ցրիչ գիրք, առաքվող փաստաթղթերի ռեեստրներ	5 տ.	5 տ.	
85.	Գաղտնի իրավական ակտերի հաշվառման մատյան	մ.ա.կ.	մ.ա.կ.	
86.	Կարգագրերի հաշվառման մատյան	5 տ.	5 տ.	
87.	Կարգագրերով կատարվող գաղտնի աշխատանքների հաշվառման մատյան	5 տ.	5 տ.	
88.	Մետաղյա պահարանների և դրանց բանալիների հաշվառման մատյան	5 տ.	5 տ.	
89.	Ռեժիմային զետեղարանների պահպանության ընդունման և հանձնման մատյան	5 տ.	5 տ.	
90.	Գաղտնի փաստաթղթերի (արտադրանքի) կորստի և գաղտնի տեղեկությունների հրապարակման փաստերի	5 տ.	-	

	հաշվառման մատյան			
91.	Աշխատանքային տետրերի հաշվառման	5 տ.	5 տ.	
92.	Գաղտնի հրատարակությունների հաշվառման մատյան	5 տ.	5 տ.	
93.	Տեղեկատվության մեքենայական կրիչների, մեքենայական փաստաթղթերի, պատվերների (հանձնարարությունների, հարցումների) հաշվառման մատյան	5 տ.	5 տ.	
94.	Կատարողի մոտ գտնվող փաստաթղթերի ներքին ցուցակ	1 տ.	1 տ.	
95.	Ծառայողներին հատկացվող ռետինե և մետաղյա անձնական կնիքների հաշվառման մատյան	30 տ.	5 տ.	
96.	Կնիքների և դրոշմակնիքների հաշվառման մատյան	30 տ.	5 տ.	
97.	Զենքի համարային հաշվառման մատյան	մշտ.[1]	-	[1] պետական արխիվ չի հանձնվում
98.	Զենքի և հատուկ միջոցների առկայության և տեխնիկական վիճակի ստուգման մատյան	5 տ.	-	
99.	Զենքի և հատուկ միջոցների հատկացման և ընդունման մատյան	5 տ.	-	
100.	Օտարերկրացիների հետ հանդիպումների հաշվառման մատյան	5 տ.	-	
101.	Օտարերկրացիների կողմից օբյեկտներ այցելելու հաշվառման մատյան	5 տ.	-	
102.	Հատուկ կարևորության, հույժ գաղտնի և գաղտնի գործերի անվանացուցակ	մշտ.[1]	մշտ.[1]	[1]պետական արխիվ չի հանձնվում
103.	ՀՀ պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման, պետական այլ մարմինների և կազմակերպությունների նորմատիվ իրավական ակտեր՝ կից փաստաթղթերով. 1) կազմակերպության հիմնական գործունեության վերաբերյալ, 2) այլ հարցերի վերաբերյալ. ա. «հույժ գաղտնի», բ. «գաղտնի»	 մշտ.[1] 30 տ. 10 տ.	 մշտ.[1] 30 տ. 10 տ.	[1]պետական արխիվ չի հանձնվում
104.	ՀՀ պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման, պետական այլ մարմինների և կազմակերպությունների նորմատիվ իրավական ակտերի նախագծեր և դրանց վերաբերյալ գրագրություն (կարծիքներ, առաջարկություններ, եզրակացություններ). 1) «հույժ գաղտնի», 2) «գաղտնի»	 5 տ. 5 տ.	 5 տ. 5 տ.	

105.	Ներքին իրավական ակտեր. 1) հիմնական գործունեության վերաբերյալ, 2) այլ հարցերի վերաբերյալ. ա. «հույժ գաղտնի», բ. «գաղտնի»	մշտ.[1] 30 տ. 10 տ.	մշտ.[1] մ.ա.կ. մ.ա.կ.	[1]պետական արխիվ չի հանձնվում
106.	Հանձնաժողովների նիստերի արձանագրություններ, ակտեր	մշտ.[1]	մշտ.[1]	[1]պետական արխիվ չի հանձնվում
107.	Փաստաթղթերի և գործերի ոչնչացման ակտեր	մշտ.[1]	մշտ.[1]	[1]պետական արխիվ չի հանձնվում
108.	Գրագրություն պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման, պետական այլ մարմինների և կազմակերպությունների հետ. 1) «հույժ գաղտնի», 2) «գաղտնի»	 30 տ. 10 տ.	 30 տ. 10 տ.	
109.	Հեռախոսային խոսակցությունները լսելու և ձայնագրառելու վերաբերյալ գրագրություններ	10 տ.	10 տ.	
110.	Հույժ գաղտնի և գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվությունների վերաբերյալ գրագրություն	10 տ.	10 տ.	
111.	Գաղտնի գործավարության ստուգման ակտեր և կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկանքներ	10 տ.	10 տ.	
112.	Գաղտնիք պարունակող՝ կորած փաստաթղթերի			
	վերաբերյալ ծառայողական քննության նյութեր. 1) «հույժ գաղտնի», 2) «գաղտնի»	 30 տ. 10 տ.	 - -	
113.	Գաղտնի գործերի և փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտեր	10 տ.	10 տ.	
114.	Զենքի, հատուկ միջոցների, կնիքների հետ կապված գրագրություններ և եզրակացություններ	10 տ.	-	
115.	Ծանոթացման տրվող փաստաթղթի (գործի) հաշվառման քարտ[1]	-	-	[1]ոչնչացվում է գործի հետ
116.	Գործի ներքին ցուցակ[1]	-	-	[1]ոչնչացվում է գործի հետ
117.	Տեղեկանք-փոխարինող[1]	-	-	[1]ոչնչացվում է գործի հետ
	7. ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ			
118.	Առաքվող փաստաթղթերի ցուցակներ (ռեեստրներ)	5 տ.	5 տ.	
119.	Հաշվառման (գրանցման) մատյաններ. 1) դիմումների գրանցման, 2) ելքի փաստաթղթերի գրանցման, 3) ստացված փաստաթղթերի գրանցման, 4) քրեական գործերի գրանցման, 5) նյութերի գրանցման, 6)օպերատիվ խորհրդակցությունների	 5 տ. 5 տ. 5 տ. մշտ.[1] 10 տ. մ.ա.կ.	 5 տ. 5 տ. 5 տ. մշտ.[1] 10 տ. մ.ա.կ.	[1] պետական արխիվ չի հանձնվում

	արձանագրությունների գրանցման, 7) ՀՀ քննչական կոմիտեի իրավական ակտերի հաշվառման, 8) իրավական ակտերի պատճենների գրանցման, 9) սուրհանդակի միջոցով ուղարկվող փաստաթղթերի գրանցման, 10) քաղաքացիների ընդունելության, 11) վարույթների գրանցման, 12) վերահսկողության վերցված փաստաթղթերի հաշվառման	մշտ. 10 տ. 5 տ. 5 տ. 5 տ. 5 տ.	- 10 տ. 5 տ. 5 տ. 5 տ. 5 տ.	
120.	Գրագրության ընթացքում առաջացած փաստաթղթերի կարգագրեր	5 տ.	5 տ.	
121.	Հանձնման-ընդունման ակտեր (պաշտոնից ազատվելու կամ այլ պաշտոնում նշանակվելու կապակցությամբ)	20 տ.	20 տ.	
122.	Քրեական գործերի թվայնացված նյութերը հանձնելու վերաբերյալ նախատեսված ձևաթղթեր	5 տ.	5 տ.	
	8. ԱՐԽԻՎ			
123.	Պահպանության ոչ ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին ակտեր	մշտ[1].	մշտ[1].	[1] պետական արխիվ չի հանձնվում
124.	Մշտական պահպանության փաստաթղթերի ցուցակներ	մշտ.	մշտ.	
125.	Պետական արխիվ հանձնվող մշտական պահպանության փաստաթղթերի ցուցակներ	մշտ.	-	
126.	Երկարաժամկետ (տասը տարուց ավելի) պահպանության փաստաթղթերի ցուցակներ	3 տ.[1]	3 տ.[1]	[1]փաստաթղթերի ոչնչացումից հետո
127.	Անձնակազմին վերաբերող փաստաթղթերի ցուցակներ	5 տ.[1]	-	[1]փաստաթղթերի ոչնչացումից հետո
128.	Վարույթը կարճված քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումներ	մշտ.	-	
129.	Դատարան ուղարկված քրեական գործերի արխիվացման տեղեկատվական քարտեր, մեղադրական եզրակացություններ	5 տ.	5 տ.	
130.	Գրագրություն ընթացիկ գործունեության վերաբերյալ (կարգագրեր)	5 տ.	-	
131.	ՀՀ քննչական կոմիտեի գործունեությամբ առաջացած արխիվ հանձնվող փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտեր	մ.ա.կ.[1]	մ.ա.կ.	[1] ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի արխիվում պահպանվողը՝ 25 տ.
132.	Արխիվային փաստաթղթերի տրամադրման գիրք	10 տ.	-	
133.	Արխիվ հանձնված վարույթը կարճված քրեական գործերի հաշվառման գիրք	մշտ[1].	-	[1] պետական արխիվ չի հանձնվում
134.	Արխիվ հանձնված քրեական գործի հարուցումը մերժված նյութերի հաշվառման գիրք	մշտ[1].	-	[1] պետական արխիվ չի հանձնվում
135.	ՀՀ քննչական կոմիտեի մարմիններում կամ ստորաբաժանումներում արխիվացվող փաստաթղթերի (գրքերի, մատյանների և կարգագրերի) հաշվառման	-	մշտ[1].	[1] պետական արխիվ չի հանձնվում

	գիրք			
136.	ՀՀ քննչական կոմիտեի մարմիններում կամ ստորաբաժանումներում արխիվացվող քրեական գործի հարուցումը մերժված նյութերի հաշվառման գիրք	-	մշտ[1].	[1] պետական արխիվ չի հանձնվում

Հապավումների ցանկ՝
տ. - տարի
մշտ. – մշտական
մ.ա.կ. – մինչև անհրաժեշտությունը կորցնելը (ոչ պակաս, քան 2 տարի)»